



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻՊՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 27 » _____ 07 _____ 2020թ.

№ 08//ԼԱ/ - 222

**Հուլիսի 20-26-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում**

Հուլիսի 21-ին՝ տեղ-տեղ, 23-ին՝ առանձին շրջաններում, 22-ին, 24-25-ին շրջանների զգալի մասում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների առավելագույն գումարային քանակը գրանցվել է Դիլիջանում, Հրազդանում՝ 50մմ, Իջևանում՝ 45մմ, Արթիկում՝ 42մմ, Վանաձորում, Մարտունիում՝ 38մմ, Օձունում, Մասրիկում 34մմ, Ծաղկահովիտում՝ 33մմ, Ստեփանավանում, Գյումրիում, Սեմյոնովկայում՝ 30-31մմ, Գավառում, Սևանում, Ապարանում, Ջերմուկում՝ 24-26մմ, մնացած շրջաններում 15-20մմ քանակությամբ: Հուլիսի 20-ին և 26-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը հուլիսի 20-21-ին բարձր է եղել նորմայից 4-6 աստիճանով, 22-ին եղել է նորմայի սահմաններում, 23-25-ին՝ նորմայից ցածր 1 աստիճանով, 26-ին՝ բարձր 1-3 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հուլիսի 20-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում դիտվել է +39...+40°C, Սյունիքի հովիտներում՝ +36...+38°C, Տավուշում՝ +33...+36°C, Սյունիքի նախալեռներում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Լոռիում՝ +29...+34°C աստիճան տաքությամբ:

Ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է հուլիսի 24-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում՝ +8...+12°C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +11...+16°C (Տաշիր՝ +9°C), Տավուշում, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ +17...+20°C (Դիլիջան՝ +14°C), Արարատյան դաշտում, Վայոց Ձորի նախալեռներում, Սյունիքի հովիտներում՝ 18...+22°C:

Հուլիսի 22-ին Դիլիջանում դիտվել է ուժեղ անձրև՝ 31մմ/12ժ, 24-ին՝ Հրազդանում՝ 35մմ/6ժ քանակությամբ:

Հուլիսի 24-ին Վանաձորում դիտվել է ուժեղ քամի, պոռթկումներում՝ 25մ/վ արագությամբ:

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում դիտվել է փոփոխական ռեժիմ:
Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով և կազմել 1900.77 մ
(26.07.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է 2 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժ/պ

Լ. Ազիզյան